ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

30.09.2022 թ. կնքված թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-23/01-2 տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան 16 հոկտեմբերի 2023 թ.

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Մ. Խաչատրյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սպայդեր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Միսոյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2022 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-23/01-2 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրի 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2023 թ.-ի դեկտեմբերի 20-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությ

ունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե	«ՍՊԱՅԴԵՐ» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 7	ք.Երևան, Դավթաշեն 1 թաղ 3շ.9բն.
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	« Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011030815	Հ/Հ 1570077053850100
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 00245974
Գլխավոր քարտուղար ---------- Մ. Խաչատրյան	տնօրեն ---------- Ա. Միսոյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
30.09.2022 թ. կնքված թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-23/01-2 պայմանագրի
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ)

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատես. Չ/Բ համարը	գնումների պլանով նախատես.միջոցային ցիկ ծածկ. ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Գումարը
2	50111130/509	Կիա օպտիմա կիա սեռատո կիա ռիո, ռենո դոկկեր	500000	750000	1000000	1250000	1500000	1750000	2000000	2250000	2500000	2750000	3000000	3000000	3000000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար---------- Ս. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՍՊԱՅԴԵՐ» ՍՊԸ
ք.Երևան, Դավթաշեն 1 թղմ 3շ.9բն.
« Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570077053850100
ՀՎՀՀ 00245974

տնօրեն ---------- Ա. Միսոյան
(ստորագրություն)
Կ.Տ.